


**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



**Մարզկենտրոնը՝**  
ք. Գավառ

**Տարածաշրջանները՝**  
Գավառ,  
Ճամբարակ,  
Մարտունի,  
Սևան,  
Վարդենիս

**Քաղաքները՝**  
Գավառ,  
Ճամբարակ,  
Մարտունի,  
Սևան,  
Վարդենիս

Տարածքը	5 349 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	18.0 %
Քաղաքային համայնքներ	5
Գյուղական համայնքներ	87
Քաղաքներ	5
Գյուղեր	93
Բնակչության թվաքանակը 2012թ. տարեվերջին	235.6 հազ. մարդ
քաղաքային	71.3 հազ. մարդ
գյուղական	164.3 հազ. մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	30.3 %
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2012թ.	7.8 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	345 142.7 հա
այդ թվում՝ վարելահողեր	81 776.9 հա

**ՀՀ Գեղարքունիքի մարզը** գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով **Սևանա լիճը**:

**Մարզը հյուսիսից սահմանակից է** ՀՀ Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին:

**Մարզի** ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավարևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1 325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3 598 մ):

Բարձր լեռներն են Մպիտակասարը (3 555 մ), Վարդենիսը (3 522 մ), Գեղասարը (3 446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ):

Ամենամեծ լիճը **Սևանա լիճն է** (1 275.6 կմ<sup>2</sup>, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1 900 մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Աղմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:

**Մարզի** տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

**ՀՀ Գեղարքունիքի** մարզում է գտնվում **Սևանա լիճը**, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում է գտնվում **«Սևան» ազգային պարկը** (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային զոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1 600 և կենդանիների 330 տարատեսակներ:

**Մարզում** են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2012թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.9 %,
- գյուղատնտեսություն 18.1 %,
- շինարարություն 2.7 %,
- մանրածախ առևտուր 1.0 %,
- ծառայություններ՝ 0.8 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը **գյուղատնտեսությունն է**, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը **հանքագործական արդյունաբերությունն է**: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքները, արտադրությունը:

**Բեռնաուղևորավորադրամները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

**Մարզկենտրոնը Գավառը** (2012թ. տարեվերջին՝ 20.6 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում ՀՀ արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է: Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը **գյուղատնտեսությունն է**:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը *մշակող արդյունաբերությունն* է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

**Սևան քաղաքը** (2012թ. տարեվերջին՝ 19.3 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը *մշակող արդյունաբերությունն* է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն շինանյութերի, քիմիական, սննդի և մեքենաշինության արդյունաբերության արտադրությունները:


**Մարտունի քաղաքը** (2012թ. տարեվերջին՝ 12.9 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը *մշակող արդյունաբերությունն* է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը:

**Վարդենիս քաղաքի** (2012թ. տարեվերջին՝ 12.7 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը *մշակող արդյունաբերությունն* է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

**Ճամբարակ քաղաքի** (2012թ.՝ 5.8 հազ.բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած:

**Ճամբարակի** տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90 %-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը *մշակող արդյունաբերությունն* է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

**ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2013թ. հունվարի 1-ի դրությամբ**



**ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը				
	2008	2009	2010	2011	2012
Մանրաձախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	499	453	475	440	476
այդ թվում՝					
խանութներ	227	205	230	226	269
կրպակներ	200	182	184	156	144
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	6	2	2	2	2
առևտրի այլ օբյեկտներ	64	62	57	54	59

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	Քանակը				
	2008	2009	2010	2011	2012
Պետական նախադպրոցական	42	43	41	41	42
Պետական հանրակրթական	128	127	127	127	126
Ոչ պետական հանրակրթական	1	-	-	-	-
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	16	17	17	17	17
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	2	4	4	4	3
Պետական միջին մասնագիտական ուսումնական	7	7	7	7	7
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ*
Գավառ	ք. Գավառ	20 627
Ճամբարակ	ք. Ճամբարակ	5 844
Մարտունի	ք. Մարտունի	12 879
Սևան	ք. Սևան	20 671
	գ. Գազարին	
Վարդենիս	ք. Վարդենիս	12 701

**ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
1	Ագատ		160
2	Ախպրաձոր		356
3	Ակունք		4 651
4	Աղբերք		290
5	Այգուտ	•Այգուտ •Ճապկուտ	1 068
6	Այրք		579
7	Անտառամեջ		159
8	Աստղաձոր		4 375
9	Ավազան		191
10	Արեգունի		396
11	Արծվանիստ		3 226
12	Արծվաշեն		-
13	Արտանիշ		738
14	Արփունք		591
15	Բերդկունք		294
16	Գանձակ		4 338
17	Գեղամաբակ		126
18	Գեղամասար		1 183
19	Գեղամավան		2 056
20	Գեղարքունիք		2 128
21	Գեղաքար		167
22	Գեղհովիտ	•Գեղհովիտ •Նշխարք •Լեռնակերտ	6 567
23	Գետիկ		464
24	Դարանակ		193
25	Դղմաշեն		2 832
26	Դպրաբակ		625
27	Դրախտիկ		1 004
28	Երանոս		5 903
29	Զոլաքար		6 852
30	Զովաբեր		1 736
31	Թթուջուր		1 000
32	Լանջաղբյուր		2 526
33	Լիճք		5 514
34	Լճաշեն		5 026
35	Լճավան		597
36	Լճափ		1 250
37	Լուսակունք		1 580

\* Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

\*\* Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խառնված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեզիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2013թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
38	Խաչադբյուր		1 446
39	Ծակքար		2 769
40	Ծաղկաշեն		627
41	Ծաղկունք		1 085
42	Ծախաթաղ		389
43	Ծովազյուղ		4 300
44	Ծովազարդ		2 200
45	Ծովակ		2 725
46	Ծովասար		2 996
47	Ծովինար		5 152
48	Կալավան	•Կալավան •Բարեպատ	195
49	Կախակն		389
50	Կարճաղբյուր		2 554
51	Կարմիրգյուղ		6 358
52	Կութ		217
53	Կուտական	•Կուտական •Զառիվեր	189
54	Հայրավանք		855
55	Ձորագյուղ		4 908
56	Ձորավանք		176
57	Մաղինա		1 178
58	Մարտունի		684
59	Մաքենիս		522
60	Մեծ Մասրիկ		3 434
61	Ներքին Գետաշեն		8 301
62	Ներքին Շորժա		104
63	Նորաբակ		267
64	Նորակերտ		1 025
65	Նորաշեն		559
66	Նորատուս		6 773
67	Շատջրեք		488
68	Շատվան		540
69	Շորժա		546
70	Չկալովկա		598
71	Ջաղագաձոր		183
72	Զիլ		699
73	Սարուխան		8 190
74	Սենյունովկա		259
75	Սոթք		935
76	Վահան		1 213
77	Վաղաշեն		4 340
78	Վաննան		410
79	Վարդաձոր		3 023
80	Վարդենիկ		10 001
81	Վարսեր		2 000
82	Վերին Գետաշեն		5 048
83	Վերին Շորժա		50
84	Տորֆավան		539
85	Տրետուր		239
86	Փամբակ		520
87	Փոքր Մասրիկ		870

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2012թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	4 931	5 069
Օնվաճներ, մարդ	136	61	75
Մահացածներ, մարդ	82	38	44
Ամուսնություններ	58	X	X
Ամուսնալուծություններ	6	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	30.8	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	123	63	60
հանրակրթական	1 334	633	701
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	102	66	36
նախնական մասնագիտական (արհեստագործական)	18	2	16
միջին մասնագիտական	61	29	32
բարձրագույն մասնագիտական	75	42	33
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	31 548	...	...
Մարզիկներ, մարդ	95	2	93
Զբաղվածներ, մարդ	3 563	1 890	1 673
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	157	124	33
բժիշկներ	14	...	...
միջին բուժանձնակազմ	43	...	...
Գործազուրկներ, մարդ	467	149	318
Մոցիայական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 523	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	615	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	21 445	...	...
թատրոն	135	...	...
համերգ	-	-	-
թանգարան	96	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	32	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	19	X	X
միջին ծանրության	11	X	X
ծանր	2	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

<sup>1</sup> Յուզանիշները հաշվարկային են: